ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/193

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1085248),

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Լ.Ղալակչյանի (լիազորագիր, տրված՝ 02.10.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12435-2020 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.08.2020թ. թիվ 07-272 գրության հիման վրա 20.08.2020թ. թիվ 26/26-1/12435-2020 գրությամբ նախաձեռնել է «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 08.09.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ն մասնակցել է «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված թիվ՝ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6» և «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4» ծածկագրերով գնման ընթացակարգին և կնքել է թիվ ՝«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» և թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» պայմանագրերը:

Թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» պայմանագրով պետք է մատակարարեինք Ալմադեզ-Քլոր ախտահանիչ միջոց, թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» պայմանագրով պետք է մատակարարվեր Հեպարին դեղորայքը:

Պատվիրատուի հետ պայմանագրերը կնքվել է 2020թ.-ի փետրվարի 13-ին («ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1») և փետրվարի 26-ին («ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1»), սակայն պայմանագրերը ուժի մեջ է մտել կնքված լրացուցիչ համաձայնագրերով՝ ֆինանսական միջոցների հատկացումից հետո:

Պայմանագրերի հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մատակարարման վերջնաժամկետ է սահմանված տվյալ տարվա (2020թ-ի) դեկտեմբերի 25-ը, իսկ համաձայնագրերով մատակարարման այլ ժամկետ սահմանված չէ:

Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետն է՝ «ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո 1-ին փուլի համար, եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ:

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը»:

Իսկ պատվիրատուին վերոնշյալ 2 ապրանքները մինչ այսօր չմատակարարելու պատճառները բերում ենք ստորև:

Թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» պայմանագրով Ալմադեզ-Քլոր ախտահանիչ միջոց:

Մեր կողմից պատվիրատուին նախապես տեղեկացվել էր Ալմադեզ-քլոր միջոցի մատակարարման հնարավոր խնդիրների առաջացման վերաբերյալ և համաձայնագիրը կնքելուց հետո առաջարկվել էր չափաբաժինը մատակարարել ամբողջությամբ, քանի դեռ պահեստում առկա էր բավարար միջոցներ, սակայն պատվիրատուն հրաժարվել էր մատակարարումից «պահանջարկի բացակայություն» հիմնավորմամբ և խնդրել մատակարարել միայն 1 կգ, ինչը արվել էր:

Մնացորդային քանակի մատակարարումը մինչ այժմ չի կատարվել մեր կամքից և ցանկությունից անկախ՝ պայմանավորված ֆորս-մաժորային իրավիճակով կապված նոր կորոնավիրուսի համաճարակի հետ, որի մասին պատվիրատուն պատշաճ ծանուցվել է:

Տվյալ ապրանքը պետք է ներկրվեր արտերկրից, Ռուսաստանից, սակայն մարտի 2-ին Ռուսաստանի Դաշնության կառավարությունը թիվ 223 որոշումով պայմանավորված խաթարվել է մատակարար կազմակերպության գործունեությունը և արտադրական պլանները, որը հնարավորություն չի տալիս մեր կազմակերպությանը պլանավորել մատակարարումները սեղմ ժամկետներում:

Պատվիրատուի կողմից պատվերը ստանալուց հետո, ինչպես նաև սույն թվականի օգոստոսի 14-ին մեր կազմակերպությունը՝ չցանկանալով խաթարել Գավառի բժշկական կենտրոնի բնականոն աշխատանքը, գրավոր դիմել է պատվիրատուին և պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում առաջարկել պայմանագիրը լուծել 7-րդ կետով (Ֆորս-Մաժոր), քանի որ տվյալ իրավիճակը ձգվել է ավելի քան 3 ամիս:
«Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին»:

Թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» պայմանագրով Հեպարին դեղորայքը:

Հեպարին դեղորայքի հումքի միակ արտադրողը աշխարհում հանդիսանում է Չինաստանը: Կապված կորոնավիրուսի համաճարակի հետ, չինաստանի գործարանները ենթարկվեցին երկարատև պարապուրդի, ինչի հետևանքով ամբողջ աշխարհում տիրեց հումքի գլոբալ դեֆիցիտ, որը տևում է մինչ օրս:

Սույն թվականի մարտի 2-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նույնպես զգուշացրել է հեպարինի գլոբալ դեֆիցիտի մասին, կապված կորոնավիրուսի տարածման տեմպերի հետ:
https://www.who.int/bulletin/volumes/98/3/20-020320.pdf?ua=1

Մեր տարածաշրջանում հեպարինի հիմնական արտադրողները, ինչպես նաև մեր մատակարար կազմակերպությունը նույնպես բախվել է նույն խնդրին և դադարեցրել հեպարին դեղի մատակարարումը:

Ինչպես Ալմադեզ-քլորի, այնպես էլ Հեպարինի դեպքում, գրավոր դիմել ենք պատվիրատուին և պայմանագրով սահմանված իրավասությունների շրջանակում առաջարկել ենք պայմանագիրը լուծել 7-րդ կետով (Ֆորս-Մաժոր), քանի որ տվյալ դեղամիջոցի համար նույնպես ֆորս-մաժորային իրավիճակը ձգվում է ավելի քան 3 ամիս:

Վստահեցնում ենք, որ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ներկայիս պայմաններում դա ուղղակի անհնար է պլանավորել բոլոր մատակարարումները անթերի և կատարել բոլոր ապրանքների մատակարարումը պատվերը ստանալուց հետո սեղմ ժամկետում:

Սա այն դեպքում, երբ կողմերի միջև կնքված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված մինչև 2020թ-ի դեկտեմբերի 25-ը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն, եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը ԿԱՄ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Պատվիրատուն պայմանագիրը խզել է 2.1.7.1 կետի բ) ենթակետի ուժով, ինչը երևում է պատվիրատուի գրության համալիր վերլուծությունից, մինչդեռ 2.1.7.1 կետի բ) ենթակետով սահմանված խախտումը արձանագրելու համար, անհրաժեշտ է այդ ժամկետի (25.12.2020) սպառված լինելու հանգամանքի առկայությունը:

Կողմերի միջև կնքված թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/7-1» պայմանագրի 7-րդ կետով նշվում է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Նաև նշվում է, որ այդպիսի իրավիճակներ են՝ արտակարգ դրություն հայտարարելը, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը և բերված ապացույցները՝ խնդրում ենք Ձեզ չբավարարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնած ընթացակարգը և «Աիդա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/193 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.08.2020թ. թիվ 07-272 գրությամբ հայտնել է, որ 26.02.2020թ. թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» և 13.02.2020թ. թիվ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրերով ապրանքների մատակարարման պայմանագրեր են կնքվել «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի հետ: Համաձայն նշված պայմանագրերի 1.1 կետի՝ վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրերի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրերի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պատվիրատուն նշել է, որ էլ. փոստի և հեռախոսային կապի միջոցով բազմիցս ապրանքի մատակարարման պատվեր է արվել համապատասխանաբար 101-րդ չափաբաժնի՝ հեպարին, և 10-րդ չափաբաժնի՝ ախտահանիչ ալմադեզ քլոր, 05.08.2020թ., որը սակայն մնացել է անպատասխան:

Հետևաբար մատակարար ընկերության կողմից խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն ծանուցել է «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին պայմանագրերի մասնակի միակողմանի լուծման վերաբերյալ:

«Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հրաժարվել է շարունակել «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի հետ համագործակցությունը և 2.1.7 կետի համաձայն՝ 101-րդ և 10-րդ չափաբաժինների համար լուծել է պայմանագրերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/193 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՍՑ-ՆԳ-2020/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 13.02.2020թ. կնքվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 1), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 02.03.2020թ. կնքվել է N 7 համաձայնագիրը:

3. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.08.2020թ. թիվ 07/271 ծանուցմամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ համաձայն «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 13.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 02.03.2020թ. կնքված N 7 համաձայնագրի՝ ապրանքատեսակի մատակարարման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի

շուտ/, Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը՝ թիվ 10 չափաբաժնով՝ 14 կգ «Ալմադեզ քլոր», որից չի մատակարարվել է 12 կգ «Ալմադեզ քլոր»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 14.08.2020թ. հրապարակվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 26.02.2020թ. կնքվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր 2), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

6. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 16.03.2020թ. կնքվել է N 33 համաձայնագիրը:

7. «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.08.2020թ. թիվ 07/270 ծանուցմամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ համաձայն «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 26.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 16.03.2020թ. կնքված N 33 համաձայնագրի՝ ապրանքատեսակի մատակարարման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ թիվ 101 չափաբաժնով՝ 1600 հատ «Հեպարին», որից չի մատակարարվել է 1570 հատ «Հեպարին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 14.08.2020թ. հրապարակվել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12435-2020 գրությունը, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 17.08.2020թ. թիվ 07-272 գրությունը և կից փաստաթղթերը, ինչպես նաև «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. **խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած **պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից**

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև կնքվել են համապատասխանաբար 13.02.2020թ. «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» և 26.02.2020թ. «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրերով պայմանագրեր, որոնց 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրերով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրերի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ 14կգ «Ալմադեզ-քլոր», իսկ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝ որ 1600 հատ «Հեպարին» ապրանքատեսակները պետք է մատակարարվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/:

«ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 02.03.2020թ. կնքվել է N 7 համաձայնագիրը, իսկ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրի շրջանակներում 16.03.2020թ. կնքվել է N 33 համաձայնագիրը:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.08.2020թ. թիվ 07/271 ծանուցմամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ համաձայն «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 13.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 02.03.2020թ. կնքված N 7 համաձայնագրի՝ ապրանքատեսակի մատակարարման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ, Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը՝ թիվ 10 չափաբաժնով՝ 14 կգ «ալմադեզ քլոր», որից չի մատակարարվել է 12 կգ «Ալմադեզ քլոր»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և 14.08.2020թ. տեղեկագրում հրապարակել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված 14.08.2020թ. թիվ 07/270 ծանուցմամբ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնել է, որ համաձայն «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի միջև 26.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի և դրա հիման վրա 16.03.2020թ. կնքված N 33 համաձայնագրի՝ ապրանքատեսակի մատակարարման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, Ընկերությունը պարտավորվել է մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը՝ թիվ 101 չափաբաժնով՝ 1600 հատ «Հեպարին», որից չի մատակարարվել է 1570 հատ «Հեպարին»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և տեղեկագրում 14.08.2020թ. հրապարակել է «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Պատվիրատուն նշել է, որ 05.08.2020թ. ապրանքի մատակարարման գրավոր պատվեր է ուղարկվել թիվ 101 չափաբաժնով նախատեսված ապրանքի՝ «Հեպարին», և թիվ 10 չափաբաժնով նախատեսված ապրանքի՝ «Ալմադեզ քլոր», սակայն Ընկերության կողմից նշված ապրանքները չեն մատակարարվել և միևնույն ժամանակ ներկայացրել է ներկայացված պատվերի քաղվածքը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

<u>բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:</u>

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ 05.08.2020թ. գրությամբ պահանջված ապրանքները չեն մատակարարվել Ընկերության կողմից, փոխարենը «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն 13.08.2020թ., երբ արդեն խախտվել են պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետները Պատվիրատուին ուղղված 13.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Աիդա թրեյդ» ՍՊԸ-ի և «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջև 13.02.2020թ. կնքվել են «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով, 26.02.2020թ.՝ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրերը, որոնց շրջանակներում «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ն համապատասխանաբար 101-րդ և 10-րդ չափաբաժինների մասերով պետք է մատակարարի հեպարին դեղամիջոցը և ալմադեզ-քլոր ախտահանիչ նյութը:

Սակայն, մեր մատակարար կազմակերպությունը մերժել է հեպարինի մատակարարումը ՀՀ, պատճառաբանելով, որ արտադրող կազմակերպությունը գնի մրցունակությունը պահպանելու նպատակով կատարել է հումքի մատակարարի փոփոխությունը, ինչը արգելք է հանդիսանում դեղի ՀՀ ներկրելու համար: Արտադրողը

նախկինում չէր տրամադրել մեզ նման ինֆորմացիա և մեր կազմակերպությունը չէր կարող նախապես տեղյակ լինել տվյալ գործընթացի վերաբերյալ:

Ալմադեզ-քլորի համար թեպետ կանխավ բանավոր զգուշացվել է Ձեր հնարավոր խնդիրների առաջացման պատճառով ամբողջ քանակի մատակարարման միջոցով դրանից խուսափելու համար, սակայն կախված պահանջարկի բացակայությունից Ձեր կողմից մեր առաջարկը մերժվել է: Տվյալ պահին, Ռուսաստանի կառավարության 2020 թվականի մարտի 2-ի թիվ 223 որոշման ախտահանիչ նյութերի արտահանման արգելքի հետևանքով մեր մատակարարի աշխատանքային գործունեության խաթարման հետևանքով հնարավոր չէ իրականացնել պատվերի մյուս մասը:

Ուստի՝ ելնելով COVID-19-ի հետևանքով աշխարհում ստեղծված իրավիճակից, արտակարգ դրությունից և առաջացած մի շարք պատճառահետևանքային գործոնների ազդեցությունից հիվանդանոցի աշխատանքը պարալիզման չենթարկելու մտահոգությունից խնդրում ենք տվյալ չափաբաժնի մասով լուծարել պայմանագիրը համաձայն պայմանագրի 7-րդ կետի (ֆորս մաժոր), որը բնորոշում է ստեղծված իրավիճակը, այն է՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի պահանջով Ընկերության կողմից, որպես լրացուցիչ հիմնավորումներ, ներկայացվել են գործընկեր կազմակերպություններից ստացված թվով 2 գրություն:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված բելառուսական ընկերությունների մեկը 24.02.2020թ. թիվ 21-16/31 գրությամբ հայտնել է հետևյալը.

«… Այսօրվա դրությամբ «Հեպարինի» արտադրության համար նախատեսված հումքի զգալի թանկացմամբ պայմանավորված, մեր ձեռնարկությունը գնում է սուբստանցիան

(ակտիվ նյութ/բաղադրիչ) Yino Pharma Limited ընկերությունից /Չինաստան/, որի արժեքը թույլ է տալիս պահպանել պատրաստի ապրանքի մրցունակ գինը:

Սակայն, հումքի նշված արտադրողը ներառված չէ նորմատիվ փաստաթղթերում, որոնք գործում են ՀՀ տարածքում և համապատասխան փոփոխությունները գրանցման դոսյեում ներառելու համար որոշակի ժամանակ կպահանջվի (ոչ պակաս քան 1,5 -2 տարի):

Ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք դիտարկել «Հեպարինի» գնման հնարավորությունը, արտադրված Yino Pharma Limited ընկերության /Չինաստան/ սուբստանցիայից (ակտիվ նյութ/բաղադրիչ)»:

«Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ուղղված ռուսական ընկերություններից մեկը 14.08.2020թ. թիվ 1408/01 գրությամբ հայտնել են հետևյալը.

«Պայմանավորված համաճարակաբանական դրությամբ, «Ալմադեզ քլոր» ախտահանող նյութի պատրաստման ժամկետները երկարաձգվել են, մեր ընկերությունը զրկված է տվյալ դեղամիջոցը արտադրելու հնարավորությունից մինչև 31.09.2020թ.»:

Վերը շարադրված գրությունների վերաբերյալ հարկ եմ համարում նշել, որ մի գրությունը ներկայացվել է 24.02.2020թ., երբ դեռևս արտակարգ դրություն հայտարարված չի եղել, իսկ մյուս գրությունը՝ 14.08.2020թ., երբ արդեն ի հայտ են եկել Պայմանագրի լուծման հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված Պայմանագրի 7-րդ կետին, հայտնում եմ հետևյալը.

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ***<u>ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը</u>***, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ **նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է**, եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն **«և»** կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Պայմանագրի 7-րդ կետը կիրառելի է այն պայմաններում, երբ հայտարարվում է ռազմական և արտակարգ դրություն, մինչդեռ ՀՀ կառավարության 16.03.2020թ. N 298-Ն որոշմամբ ՀՀ-ում հայտարարվել է միայն արտակարգ դրություն, հետևաբար Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումն այս մասով անհիմն է:

Այսպիսով՝ Ընկերությունը 13.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով, 26.02.2020թ. կնքված «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրերի և դրանց հիման վրա 02.03.2020թ. կնքված N 7 և 16.03.2020թ. կնքված N 33 համաձայնագրերի համաձայն՝ ապրանքատեսակի մատակարարման նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝ 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ ըստ Պատվիրատուի պահանջի պարտավոր էր մատակարարել «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» ծածկագրով Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ թիվ 10 չափաբաժնով 14 կգ «Ալմադեզ քլոր», իսկ «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը՝ 1600 հատ «Հեպարին»: Սակայն Ընկերությունը, Պատվիրատուից 05.08.2020թ. ստանալով նշված ապրանքների մասով մատակարարման պահանջ («Ալմադեզ քլոր»-12 կգ, «Հեպարին»-500 հատ), 13.08.2020թ. դրությամբ չի մատակարարել անհրաժեշտ ապրանքները, փոխարենը 13.08.2020թ. գրությամբ խնդրել է Պատվիրատուին, համաձայն Պայմանագրերի 7-րդ կետի, տվյալ ապրանքների չափաբաժինների մասով լուծարել «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/4-1» և «ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/6-1» ծածկագրերով պայմանագրերը: Սույնով արձանագրում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրերի էական խախտումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի մասնակի լուծմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի

առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.08.2020թ. թիվ 26/26-1/12435-2020 գրությամբ «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Աիդա թրեյդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**